Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 819 - Ա
որոշման

«ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Երևանի Հ.154 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 181 սաների և 32 աշխատակիցների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա)
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (քաղաք Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312)՝ «Երևանի Հ.154 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ (քաղաք Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00822685) համատեղ
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Երևան, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	39,460,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Երևան համայնք

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագիրը շարունակական է, այն իրականացվում է 2007 թվականից:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մանկապարտեզի սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում՝ ծախսերի ֆինանսավորման միջոցով (բացառությամբ աշխատակիցների աշխատավարձի և սննդի), նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 39,460,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բնական գազի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 13,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 2,600,000 դրամ. 2) գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում և կարգաբերման ծառայությունների ձեռքբերում՝ 960,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 192,000 դրամ: 3) էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 1,600,000 դրամ. 4) ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ձեռքբերում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 400,000 դրամ. 5) գրենական պիտույքների և պարագաների ձեռքբերում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 400,000 դրամ. 6) տնտեսական ապրանքների, կենցաղային, հիգիենիկ պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 700,000 դրամ. 7) մանկապարտեզի շենքի ընթացիկ վերանորոգման աշխատանքների

		իրականացում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 1,200,000 դրամ. 8) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 800,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, տարեկան՝ 800,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Երևանի քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ